ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Սիրեցյալ Եղբայր Մեր,

Այսօր, վերստին կանգնած Հիսուսի դատարկ գերեզմանի առջև, սուրբ առաքյալներու հավատքով ջերմացած սրտերով անգամ մը ևս կխոստովանինք թե ճշմարտապես «յարեաւ Քրիստոս ի մեռելոց», մահվամբ մահը հաղթեց և իր հարությամբ կյանք պարգևեց աշխարհի մարդոց, մեզի բոլորիս:

Հիսուսի հարությունը գերագույն գրավականն է կյանքի ուժերու հաղթանակին՝ ընդդեմ մահվան, բարվո ու արդարության հաղթանակին՝ ընդդեմ մեղքին ու չարին, սիրո և խաղաղության հաղթանակին՝ ընդդեմ ատելավառ ու խռովարար արարքներու:

Սուրբ Հատկի այս առավոտուն, Հիսուսի հարության ավետիսով թող ցնծա մեր Մայր Եկեղեցին, և մեր հավատացյալ զավակներու կյանքն ու ձեռաց գործերը թող լուսավորվին հարության ուրախության ճառագայթումով:

Հարուցյալ Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի Իշման Սուրբ Սեղանեն և սուրբ գրական Արարատյան Հայոց աշխարհեն, Ձերդ Ամենապատվության և

Սուրբ Աթոռիդ զինվորյալ միաբանության, ձեր բոլոր եկեղեցիներուն ու համայն ժողովուրդին՝ մեծ ավետիս՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Շնորհք հրաշալի հարության Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ այժմ և հավիտյան: Ամեն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի սրտագին շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորանքների համար: